Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository

Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial 3.0 Unported (CC BY-NC 3.0) license.

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով

ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

ՅԵՐԿԻՐԸ ՊԵՏՔ Է ՃԱՆԱՉԻ
ԻՐ ՀԵՐՈՍՆԵՐԻՆ

№ ՄԱՆԿԱԿԱՆ ՍԵՐԻԱ №

Վ. ՆՈՐԵՆՑ

ԿԱՐՄԻՐ ՀԵՐՈՍԸ

ՆԿ. ՄԱՍԱՉԱՆՅԱՆԻ

891.99 Մ
Գ-93

ՊԵՏՀՐԱՏ - 1932 - ՅԵՐԵՎԱՆ

891.99Ս
Հ-93
12 JUL 2013
11797

ԿԱՐՄԻՐ ՀԵՐՈՍԸ

Մեր ազատ յերկրի արթուն պահակը
մեր մեծ բանակն է, կարմիր բանակը:
Սոցիալիստական շինարարության
ակտիվ մասնակից, անքուն պահապան:
Ամեն մի ռազմիկ կարմիր բանակի
մի շինարար է մեր ազատ կյանքի:
Գյուղում-կոլխոզում, կամ թե քաղաքում
աշխատում է նա ինչպես բանակում:
Գյուղում կազմում է կոլխոզ ու արտել
և պայքարում է կուլակության դեմ:
Բանվորներին նա ոգնում է, մրցում,
մեծ հնգամյակի կատարման գործում:
Նա աշխատելով, հսկելով արթուն՝
ռազմական գործն է սովորում, կարդում:
Ձե՞վոր թշնամին հանգիստ չի նստում,
հիմա կռիվ է մեր դեմ պատրաստում:
Ուրիշի հողից մենք չենք պահանջի
բայց և մեր հողից մի թիզ չենք զիջի:
Ու դրա համար, յերբ նշան տրվի,
կարմիր բանակը պատրաստ է կռվի:
Յեվ պաշտպանելով մեր ազատ հողը՝
պայքար կռվում ել մենք ենք հաղթողը:
Ոգնում են մեր մեծ, վերջին պայքարին
բոլոր բանվորներն ամբողջ աշխարհի:
Քանի վոր կարմիր մեր բանակն անպարտ
կռվում է նրանց ազատման համար:

60276.67

2011-0.L

Մեր ռազմիկները, մեր կարմիր բանակ-
բոլորն ել բանվոր գյուղացու զավակ:
Կարմիր զինվորից մինչև քաղ ղեկը
հասարակ ու քաջ բանվոր տղերք են:
Հասարակ բանվոր, համառ ու տոկուն
վոքա՞ն հերոսներ կան մեր բանակում:
Հերոսներ, վորոնք մեծ հոկտեմբերին
արյուն թափելով նոր կյանքը բերին:
Հեղափոխության առաջին դիրքում
մեծ դործի համար կռվել են անքուն:

С А 32-К 460

Ամեն պիոներ ու հոկտեմբերիկ
պետք ճանաչի այդ հերոսներին,
պետք է իմանա, թե ի՞նչ են արել,
սովորի նրանց նման պայքարել:
Լսեցեք պատմեմ ձեզ, ահավասիկ,
նման մի կարմիր հերոսի մասին:
Նրա գործերի մասին կարդալով
անունը չմոռանաք՝ Իվան Վարդանով:

Իվանի հայրը՝ Շնհեր գյուղացի՝
մեծ ընտանիքով մի բուռ հողի տեր՝
զուրկ էր ապրուստից, կարոտ չոր հացի,
մեկքին հազար պարտք, մեկքին հազար բեռ:
Գյուղում անկարող ապրուստ ճարելու՝
քաղաք է յերթում հեռու քաղաքում,
ու վեր է կենում ճանապարհվելու
դեպի մեծ քաղաք, քաղաքը Բագու:
Իվանի հայրը բանվոր է դառնում
Բագու քաղաքում, նավթի քաղաքում,
ելի մնում է սովի ճիրանում,
ելի մնում է հոգս ու կարիքում:

Դպրոց չտեսած՝ Իվանը մի որ
մի ծեր դարբինի մոտ դառնում է աշկերտ,

Հետո դառնում է որավարձ բանվոր,
ամսական չահը միայն վեց մանեթ։
Այդ էլ չի հանում նրանց կարիքից,
մնում են դարձյալ սև հացի կարոտ,
վորպեսզի Իվանն ոգնի հայրիկին,
բանվոր է դառնում մի հարուստի մոտ։
Նավթի հանքերում այդ բուրժույ մարդու՝
Իվանի համար ամեն ինչ նոր եր.
չատ հին բանվորներ եյին աշխատում,
Իվանը նրանցից չատ բան սովորեց։

Հազարինն հաբյուրհինգ թվին եր.
Բաղվում բռնկեց հսկա գործադուլ.
չոգացին գնչքեր, սրեր, սվիններ.
բանվորը թողեց հանք ու գործարան

Բանվորների և գյուղերի միջև
մեծ կռիվ յեղավ և թափվեց արյուն.
ցարն ապստամբած բանվորին ճնշեց,
հերոսներ ընկան այդ մեծ պայքարում:
Հենց այդ հինգ թվի հեղափոխության
կռիվների մեջ, առաջին անգամ
Իվանը վերցրեց սուր ու հրացան,
յերբ պատանի յեր տասյոթ տարեկան:
Հենց այդ կռվում նշ, Բաքու քաղաքում,
Իվանն ստացավ վերքը առաջին.
Դա նշան յեղավ, վոր միշտ [illegible]
հեղափոխության համար մ[illegible]

Մի տարի հետո մեր բանվոր Իվանն
արդեն դառնում է կարմիր բոլշևիկ,
յերդվում նվիրվել հեղափոխության,
Լենինի համրից յերբեք չչեղվի:

Բանվոր Իվանը Բաքու քաղաքում
մնում է յերկար, յերկար աշխատում
բոլշևիկների խուսացող շարքում,
հեղափոխության գործը պատրաստում:

գաղտնի բջիջում աշխատում է նա,
կազմակերպում է նոր բանվորներին,
վոր դասակարգը, ինչպես մի բանակ,
ազատությունը իր զենքով բերի:
Ու հոկտեմբերի կարմիր որերին
մեր Վարդանովը, բոլշևիկ բանվոր
ընկերների հետ, հրացանը ձեռին,
հեղափոխության դառնում է զինվոր:

Հազարիններորյուր տասնևութ թվին
կարմիր գվարդիայում բանվոր Իվանին
Զինկոմի պաշտոն և զենքեր տվին,
վոր հոկտեմբերի գործը պաշտպանի:
Քաղաքացիական մեծ կռիվներին
նա մասնակցում է ակտիվ տնընդհատ,
մինչև թշնամուն ցաք-ցրիվ արին
կարմիր բանակի գնդերը անհաղթ:
Նա մասնակցում է կռվին, հաղթության
Անդրկովկասյան կարմիր բանակի.
Անդրկովկասի խորհրդայնացման
Իվանը զենքով յեղավ մասնակից:

Հենց նրա գունդն եր, վոր Ղարաբաղում
մուսավաթական զորքին եր քշում,
հենց նրա գունդն եր դաշնակին դաղում,
դեպի Զանգեզուր արշավում Շուշուց:
Հասավ ոգնության գյուղացուն տեղի,
վոր դաշնակի դեմ կռվում եր վստահ,
ջարդեց մռութը դաշնակ Նժդեհի,
Գորիսից նրան քշեց պարսկաստան:
Իվանի գունդն եր, վոր մուսավաթի
զորքը ջարդելով, մտավ Նախիջևան.
այդ հերոսության համար մեծ պատիվ
տվեցին նրան, պարգև ու նշան:

Ադրբեջանի և Հայաստանի
հեղափոխության մասնակցելուց զատ,
Իվանն ևս դնդով նաև Վրաստանի
ապստամբությունն ոգնության հասավ:
Նա կուսակցության ու դասակարգի
տրված հրահանգը պատվով կատարեց,
վրացի բանվորի, գյուղացու կողքին,
խորհրդայնացման համար պայքարեց:
Շարունակ յեղավ կռվի ճակատում,
մինչև մենշևիկ զորքը քշելով
ցրիվ տվեցին, հասնելով Բաթում
մինստրներին թափեցին Սև ծով:

Կռվի ճակատից նա վերադարձավ,
յերբ վոր թշնամին ջարդված եր արդեն
ամբողջ Կովկասը կարմիր եր դարձած,
ու սոցիալիզմի ուղին եր հարթել:

Հեղափոխության ամբողջ ընթացքում
կարմիր բանակում մնաց անդադար,
մինչև հիմա յել կարմիր բանակում
աշխատում է նա տոկուն և համառ:
Տասնյոթ տարեկան մի պատանի յեր,
յերբ զենք վերցրեց առաջին անգամ
ու մինչև հիմա, յերկար տարիներ,
դասակարգային դիրքումն և կանգնած:

Ակադեմիայում մի քանի տարի
ռազմական գործը սովորեց համառ,
վոր եվ ավելի անշեղ պայքարի
Լենինյան գործի հաղթության համար։
Ավարտելուց վերջ, յերբ նա անցյալի
փորձին կուտակեց գիտության պաշար,
գարձավ մեր կարմիր, անպարտ, պանծալի
Հրետանային գնդին կոմիսար։
Ու կրկին առաջ գնաց, համաձայն
մեր իշխանության բարձր հրամանի,
Զինկոմ Իվանը ոգնական դարձավ
մեր դիվիզիայի հրամանատարի։

Տարիներ առաջ հասարակ բանվոր՝
նա առաջ գնաց պայքարով համառ,
իր դասակարգի հասարակ զինվոր՝
աճեց, մեծացավ, գարձավ կոմիսար։
Իր դասակարգի համար ով ազնիվ
այդպես կռվել է անդուլ, անդադար,
իր դասակարգից կստանա պատիվ
այդ հրաստության և գործի համար։
Ահա այդ գործի ու կռվի համար
Լիշխանությունը զինկոմ Իվանին,
հերոս Իվանին արժանի գտավ
աշխատանքային դրոշի նշանին։

Իվանի նման համառ ու տոկուն
վորքա՞ն հերոսներ կան մեր բանակում։
Հերոսներ, փարոնք մեծ Հոկտեմբերին
սոցիալիստական նոր կյանքը բերին։
Ամեն պիոներ ու հոկտեմբերիկ
պետք է ճանաչի այդ հերոսներին։
Պետք է լմանա թե ինչ են արել,
սովորի նրանց նման պայքարել։

ՀՀ Ազգային գրադարան
NL0401445

ԳԻՆԸ 80 ԿՈՊ.

11797

543/254

1/2 դպ

ՊԵՏՀՐԱՏ N 2094
ՊԱՏՎԵՐ N T134
ՏԱՐԱԺ 5 000
ՀԻՄ. ՊԵՏՀՐԱՏԻ
ՊԱՏՎ. N572

В. НОРЕНЦ — КРАСНЫЙ ГЕРОЙ

АРМЕНГИЗ-ЭРИВАНЬ